

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՐՑԸ ԼՈՆԴՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ  
(12 փետրվարի – 10 ապրիլի, 1920 թ.)**

**ԱՐԱ ՊԱՊՅԱՆ**

Փարիզի վեհաժողովում (1919-1920 թթ.) Մեծ տերությունների համար (Բրիտանական կայսրություն, Ֆրանսիա, Իտալիա, Միացյալ Նահանգներ և Ճապոնիա) առաջնային հարցը պարտված Գերմանիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումն էր: Այդ պայմանագիրը, որն առավելապես հայտնի է Վերսալի պայմանագրի անունով, ստորագրվել է 1919 թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1920 թ. հունվարի 10-ին: Միայն դրանից հետո է, որ Մեծ տերությունները ցանկություն և հնարավորություն են ունեցել հանգամանալից անդրադառնալու այլ հարցերի:

Օսմանյան կայսրության ապագայի հարցը խորազնին և հետևողական քննության առարկա է դարձել Փարիզի բուն վեհաժողովին հաջորդած և դրանից աժանցվող՝ Լոնդոնի առաջին համաժողովի ժամանակ (12 փետրվարի – 10 ապրիլի, 1920 թ.)<sup>1</sup>: Համաժողովի աշխատանքներն ընթացել են Փարիզի վեհաժողովում ձևավորված Գերագույն խորհրդի (Supreme Council) ձևաչափով՝ մի բացառությամբ: Միացյալ Նահանգների պաշտոնական ներկայացուցիչները չեն մասնակցել Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը նախապատրաստող համաժողովի աշխատանքներին, քանզի ԱՄՆ-ն պատերազմի մեջ չի եղել Օսմանյան կայսրության հետ: Համաժողովի աշխատանքներին առավելապես մասնակցել են Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները կամ ներկայացուցիչները և ճապոնիայի դեսպանը: Երբեմն քննարկումներին, ըստ խնդրո առարկայի, ներկա են եղել հրավիրված երկրների ներկայացուցիչները:

Հայաստանի Հանրապետության կարգավիճակի և սահմանների հարցը եղել է Լոնդոնի առաջին համաժողովի հիմնական խնդիրներից մեկը: Համաժողովն առաջին անգամ Հայաստանի կարգավիճակի հարցին անդրադարձել է աշխատանքների երրորդ օրը՝ 1920 թ. փետրվարի 14-ին: Անդրադարձը եղել է խիստ համառոտ. համաժողովը պարզապես վերահաստատել է Թուրքիայի վերաբերյալ արդեն իսկ նախկինում ձեռք բերված սկզբունքային համաձայնությունները, այդ թվում՝ «անկախ Հայաստան ստեղծելու պարտավորությունը»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս «Documents on British Foreign Policy 1919-1939», (ed. by R. Butler and J. Bury), First Series, v. VII, London, 1958, էջ III. [հետայսու՝ DBFP]

<sup>2</sup> DBFP, v. VII, Document № 6.2: Review of the general principals of the Turkish peace treaty, Feb. 14, 1920, p. 43.

Հայաստանի Հանրապետության սահմաններին առաջին հանգամանակից անդրադարձը տեղի է ունեցել փետրվարի 16-ի նիստին: Նիստի սկզբում նախագահողը՝ Բրիտանական կայսրության արտգործնախարար լորդ Քերզոնը (նաև՝ Քըրզոն, Lord Curzon), նախ հիշեցրել է, որ Հայաստանի սահմանների վերաբերյալ առկա է երկու տեսակետ: Մի տեսակետի կողմնակիցները գտել են, որ պիտի ստեղծվի Մեծ Հայաստան (Greater Armenia), որն իր մեջ պիտի ընդգրկի Թուրքիայի [հայկական] վեց վիլայեթները և պիտի սփռվի Սև ծովից մինչև Միջերկրականը: Մյուս տեսակետի կողմնակիցները հակված են եղել ավելի փոքր Հայաստան (Lesser Armenia) ստեղծելուն<sup>3</sup>: Բրիտանական կայսրության արտգործնախարարը նաև նշել է, որ Մեծ Հայաստանի կողմնակիցները գտնում են, որ Հայաստանն իր սահմանների մեջ պիտի ընդգրկի Էրզրումի ամրոցը և Տրապիզոնի նավահանգիստը, իսկ արևելքում հարաբերությունները պիտի հստակեցնի Ադրբեջանի հետ՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցերում<sup>4</sup>:

Նույն քննարկման ժամանակ հատուկ ուշադրության է արժանացել Հայաստանի Հանրապետության՝ դեպի ծով ելք ունենալու խնդիրը: Նախագահող լորդ Քերզոնը շեշտել է, որ սկզբնական քննարկումներում դիտարկվել է Կիլիկիան Հայաստանին հանձնելու տարբերակը: Քանի որ որոշվել է Կիլիկիան թողնել Ֆրանսիային, ապա առաջարկել է քննարկել Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու հարցը և այդ կապակցությամբ քննության է դրել ստացված երկու առաջարկները: Առաջին առաջարկով Հայաստանին պիտի տրվեր Սև ծովի հարավ-արևելքում գտնվող Լազիստանը և այդ ձևով ապահովվեր Հայաստանի ծովային ելքը: Այս տարբերակի թերությունն է համարվել լազերի վրացի և մուսուլման լիները: Երկրորդ առաջարկով Բաթումը պիտի հռչակվեր ազատ նավահանգիստ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար և հարակից արվարձաններով դրվեր Ազգերի լիգայի (League of Nations) հովանու ներքո<sup>5</sup>:

Նույն նիստի ժամանակ Ֆրանսիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆիլիպ Բերթելոն (Philippe Berthelot) իր խոսքի սկզբում ընդգծել է, որ առկա է լիակատար փոխըմբռնում Ֆրանսիայի և Բրիտանիայի միջև հիմնական հարցի շուրջ, այն է՝ Ռուսական Հայաստանում ստեղծված և արդեն իսկ *de facto* ճանաչված Հայաստանը պիտի հանդիսանա հայոց նոր պետականության միջուկ (nucleus), և վերջինիս պիտի միացվեն տարածքներ Թուրքական Հայաստանից<sup>6</sup>: Առկա խնդիրը միայն միացվելիք տարածքները որոշելու մեջ է, ընդգծել է նա: Բերթելոն որպես հիմնական դժվարություն առանձնացրել է այն հանգամանքը, որ նախապես Մեծ Հայաստանի մեջ ընդգրկված տարածք-

<sup>3</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 10: Consideration of the future boundaries of Armenia: decision to appoint an Allied commission to report thereupon, Feb. 16, 1920. էջ 81:

<sup>4</sup> Տե՛ս *Ibid.*, էջ 82:

<sup>5</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 10, *op. cit.*, էջ 82:

<sup>6</sup> Տե՛ս *Ibid.*, էջ 83:

ները, որոնք սկզբնապես հայաբնակ են եղել, ջարդերի և բռնագաղթի պատճառով քննարկման պահին հայազուրկ են: Խոսելով Կիլիկիայի մասին՝ նա նշել է, որ հայերն իրենք են հրաժարվել Կիլիկիայից և փոխարենը ավելի հակված են Տրապիզոնով դեպի Սև ծով ելք ունենալու տարբերակին: Ֆրանսիացի դիվանագետը նշել է նաև, որ իր երկիրը մտադիր չէ դիտարկելու Մեծ Հայաստանի ստեղծման տարբերակը, քանի որ չկան բավարար թվով հայ վերապրողներ, ըստ այդմ՝ նման մեծ երկրում հայերը փոքրամասնություն կլինեն՝ կկազմեն բնակչության միայն մեկ քառորդը<sup>7</sup>:

Նույն նիստի վերջում ելույթ է ունեցել Իտալիայի ներկայացուցիչ, վարչապետ Ֆրանչեսկո Նիտտին (Francesco Nitti): Ըստ նրա՝ Հայաստանը պիտի լիներ անկախ երկիր, սակայն այն չպիտի հասներ մինչև Միջերկրական ծով: Առանձնանշել է Հայաստանի սահմաններին առնչվող երեք հարց՝ Էրզրում քաղաքի հարցը, որը, ըստ Նիտտիի, չպիտի տրվեր հայերին, Տրապիզոնի հարցը՝ հայերը պիտի իրավունք ունենային գործածելու նավահանգիստը, և Բաթումի հարցը՝ որն, ըստ նրա, պիտի դառնար միջազգային նավահանգիստ<sup>8</sup>:

Փետրվարի 16-ի նիստի ամփոփիչ խոսքով հանդես է եկել լորդ Քերզոնը: Նա շեշտել է, որ առկա է միանշանակ կարծիք Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ, այն է՝ ստեղծել անկախ հայկական պետություն: Սակայն սահմանների վերաբերյալ կան տարաձայնություններ, ուստի առաջարկել է Մեծ տերությունների մեկական ներկայացուցչի մասնակցությամբ ստեղծել փորձագիտական հանձնախումբ, որը զեկույց կպատրաստի «Հայաստանի նորանկախ պետության սահմանների վերաբերյալ»<sup>9</sup>:

Հաջորդ օրը՝ փետրվարի 17-ին, կողմերը ներկայացրել են Հայկական հանձնախմբի (Armenian Commission) անդամության իրենց թեկնածուներին<sup>10</sup>.

Բրիտանական կայսրություն	պրն Վանսիթարթ գնդապետ Գրիբբոն	Mr. Vansittart Colonel Gribbon
Ֆրանսիա	պրն դը Ֆլորիո պրն Կամերեր	M. de Fleuriau M. Kammerer
Իտալիա	պրն Կառլո Գալլի պրն Նոգարա	Signor Carlo Galli Signor Nogara
Ճապոնիա	պրն Ի. Յաշիդա, դեսպանության արաջին քարտուղար փոխնավապետ Կ. Աննո	Mr. I. Yashida, First Secretary of Embassy  Lieutenant-Commander K. Anno

<sup>7</sup> Տե՛ս *Ibid*, էջ 84:

<sup>8</sup> Տե՛ս *Ibid*, էջ 85:

<sup>9</sup> *Ibid*, p. 86.

<sup>10</sup> Տե՛ս DBFP, Document № 11.1(c), Terms of reference of Turkish finance, Smyrna, and Armenian Commissions, Feb. 17, 1920, էջ 87:

1920 թ. փետրվարի 21-ին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի քննարկման շրջանակում Հայաստանի կարգավիճակի հարցը մեկ անգամ ևս դարձել է խնդրո առարկա: Քննարկման է ներկայացվել պայմանագրի նախօրինակը, որի չորրորդ մասի առաջին պարբերությունն անրագրում էր. «Թուրքիան պիտի ճանաչի Հայաստանը որպես անկախ պետություն Ազգերի լիգայի հովանու ներքո» (*Turkey shall recognize Armenia as an independent State under the League of Nations*): Այդ կապակցությամբ լորդ Քերզոնը նշել է հետևյալը. Միացյալ Նահագները, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան տարբեր ժամանակներ դիտարկվել են որպես Հայաստանի հավանական խնամատարներ (mandator), սակայն նրանցից և ոչ մեկը ի վիճակի չի եղել ստանձնելու այդ հանձնառությունը: Հետևաբար, նպատակահարմար է նկատվել խնամատարությունը (mandate) տալ մի որևէ փոքր, չեզոք երկրի: Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերթելոն առաջարկել է հանել քննարկվող նախադասության վերջին հատվածը՝ մինչև Հայաստանի վերջնական կարգավիճակի հարցն ավելի բազմակողմ քննության կենթարկվի ավելի ուշ:

Փոփոխված տարբերակում պայմանագրի այդ հատվածը ստացել է հետևյալ ձևակերպումը. «Թուրքիան պիտի ճանաչի Հայաստանը որպես անկախ պետություն» (*Turkey shall recognize Armenia as an independent State*)<sup>11</sup>:

Ուշագրավ է, որ Լոնդոնի համաժողովի հենց այդ օրերին՝ 1920 թ. փետրվարի 23-ին, Բրիտանական կայսրության խորհրդարանի Արտաքին հարաբերությունների խորհուրդը, արտահայտելով Լոնդոնի համաժողովում քննարկվող հարցերի նկատմամբ իր դիրքորոշումը, բանաձև է ընդունել Հայաստանի հնարավոր սահմանների և հարակից հարցերի շուրջ: Մասնավորապես բանաձևն առանձնանշել է.

- Հայաստանը պետք է ելք ունենա դեպի Սև ծով:

- Բրիտանիան պիտի խրախուսի Տավրոսի և Ամանոսի միջև Ֆրանսիայի հովանու ներքո ոչ թուրքական պետության ստեղծումը:

- Թուրքիայի հետ պիտի ստորագրվի պայմանագիր, ըստ որի՝ բոլոր հայերը Թուրքիայից ազատ ելքի իրավունք պիտի ստանան<sup>12</sup>:

Լոնդոնի համաժողովում Հայաստանին առնչվող հաջորդ քննարկումը տեղի է ունեցել փետրվարի 27-ին: Նախ որոշվել է, որ Հայաստանը, որպես անկախ երկիր, պիտի իրավունք և պարտավորություն ունենա ստորագրելու Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը<sup>13</sup>: Ապա լորդ Քերզոնը ընթերցել<sup>14</sup> և քննարկման է դրել Հայաստանի սահմանների հարցի վրա աշխատող հանձնախմբի՝ 24 փետրվարի 1920 թ. թվակիր փաստաթուղթը, վերնագրված՝ «Ձեկույց և առաջարկներ Հայաստանին»:

<sup>11</sup> DBFP, v. VII, Document № 20.2: Discussion of parts III and IV of the draft synopsis of the Turkish treaty (political clauses), p. 181.

<sup>12</sup> Տե՛ս **Av. Aharonian**, From Sardarapat to Sevres and Lausanne, Part III, The Armenian Review, March, 1963, էջ 58:

<sup>13</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 34.1: Question of signatory powers of Turkish peace treaty, էջ 279:

<sup>14</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 34.2: Decisions concerning Armenia, էջ 280:

տանի սահմանները որոշող հանձնախմբի» (*Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia*)<sup>15</sup>:

Ձեկույցը սկսվում է Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունների հետ ունեցած հանդիպումների վկայակոչումով: Իսկապես, Ձեկույցը պատրաստելու ընթացքում վերոհիշյալ հանձնախումբը երկու հանդիպում էր ունեցել հայերի հետ՝ փետրվարի 21-ին և 26-ին, և մեկ հանդիպում վրացիների հետ՝ փետրվարի 25-ին<sup>16</sup>: Հանձնախումբը մերժել էր կրկին հանդիպել Վրաստանի և ընդհանրապես Ադրբեջանի պատվիրակությունների հետ, քանզի նրանց պահանջները համարել էր «չափազանց անհեթեթ» (*most extravagant*)<sup>17</sup>:

Հայերի հետ առաջին հանդիպման ժամանակ հիմնական Ձեկույցողն է եղել Պողոս Նուբար փաշան, որն ընթերցել է գեներալ Գաբրիել Ղորղանյանի պատրաստած Ձեկույցը Հայաստանի սահմանների վերաբերյալ<sup>18</sup>: Ձեկույցի սկզբնամասում հայկական պատվիրակությունը շեշտել է, որ սահմանները գծելիս առաջնային կարևորություն է տրվել ռազմավարական, ինչպես նաև տնտեսական, ազգագրական և պատմական նկատառումներին<sup>19</sup>: Հանդիպման ժամանակ հատուկ ուշադրության է արժանացել էրզրումի, Երզնկայի և Խարբերդի հարցը: Ըստ այդմ՝ հայկական պատվիրակությունը խոստացել և փետրվարի 23-ին հանձնախմբին է ներկայացրել պաշտոնական տեղեկանք նշյալ շրջանների ազգագրական պատկերի մասին<sup>20</sup>:

Երկրորդ հանդիպման հիմնական Ձեկույցողն է եղել Ավետիս Ահարոնյանը, ում Ձեկույցը գլխավորապես նվիրված է եղել երկու հարցի: Քննարկված առաջին հարցը վերաբերել է հայերի թվաքանակին՝ վերապրողների և հնարավոր հայրենադարձների թվին: Պատվիրակությունն իրազեկել է, որ Հարավային Կովկասում կան 200 հազար, իսկ Հյուսիսային Կովկասում՝ 60 հազար թուրքահայ գաղթականներ: Հնարավոր հայրենադարձների թիվը պատվիրակությունը հաշվել է 800 հազար: Երկրորդ հարցը վերաբերել էր հայերի հարաբերություններին լազերի, քրդերի, թաթարների և թուրքերի հետ: Հարցը դիտարկվել էր այն տեսանկյունից, որ վերջիններս, որպես ազգային և կրոնական փոքրամասնություններ, պիտի ապրեին նորաստեղծ Հայաստանի մեջ<sup>21</sup>:

<sup>15</sup> Սույն փաստաթուղթն ամբողջությամբ լույս է տեսել «Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia», Washington, November 22, 1920, Appendix I, Number 2 (prepared by Ara Papian). Yerevan, 2011, pp. 98-112 [հետայսու՝ **W. Wilson**, Arbitral Award]

<sup>16</sup> Տե՛ս **R. Hovhannisian**, *The Republic of Armenia*, v. III, Berkeley, 1996, էջ 25-32:

<sup>17</sup> Տե՛ս **Zourab Avalishvili**, *The Independence of Georgia in International Politics, 1918-1921*, London, 1940, էջ 238-239:

<sup>18</sup> Տե՛ս **Av. Aharonian**, նշվ. աշխ., էջ 60:

<sup>19</sup> Տե՛ս «Armenia, Political and Ethic Boundaries, 1878-1948», (ed. Anita Burdett), London, 1998, էջ 599 [Document: Frontiers Armenia with Turkey, Feb. 1920, pp. 599-604]:

<sup>20</sup> Տե՛ս *Ibid.*, «Document: Official response and policy to frontier questions as outlined by A. Aharonian, President of the Armenian Republic [delegation] and Boghos Nubar, President of the Armenian National delegation», London, 23 February 1920, [in French], էջ 605-609:

<sup>21</sup> Տե՛ս **Av. Aharonian**, նշվ. աշխ., էջ 62-64:

Ներկայացված զեկույցի հեղինակը դարձյալ գեներալ Ղորղանյանն է եղել<sup>22</sup>: Երկրորդ հանդիպման ժամանակ հայկական պատվիրակության կազմում են եղել նաև Կ.Պոլսի պատրիարք Ջավեն Տեր-Եղիայանը<sup>23</sup> և բրիտանահայ հասարակական գործիչ Ջեյմս Մալքոլմը<sup>24</sup>:

Վերոհիշյալ հանդիպումների, ինչպես նաև բազմաթիվ ու բազմազան աղբյուրների հիման վրա կազմված զեկույցը Հայաստանի սահմանների վերաբերյալ, ինչպես արդեն նշվել է վերը, Լոնդոնի համաժողովի քննարկմանն է դրվել 1920 թ. փետրվարի 27-ին:

Ձեկույցի առաջին մասում առանձնանշված են Հայաստանի տարածքը որոշելիս հաշվի առնված երեք հիմնական գործոնները՝ դրանք էին.

- Վերապրող հայերի թիվը. ըստ զեկույցի՝ փրկված հայերի թիվը հազիվ 500 հազար է եղել, որոնցից 150 հազարն ապաստան է գտել Ռուսահայաստանում: Հայերի ընդհանուր թիվը զեկույցում նշվել է «երկու միլիոնից քիչ»<sup>25</sup>:

- Ռազմավարական պատճառները. ելնելով պաշտպանելիության նկատառումներից՝ զեկույցում ասված է, որ «նոր պետությունը չպիտի լինի շատ ընդարձակ իր բնակչության թվի համեմատ» (*the new state out not to be too extensive in proportion to its population*)<sup>26</sup>: Հատկապես հաշվի առնելով Հայաստանի արևելյան սահմանին «մշտապես թշնամորեն տրամադրված Ադրբեջանի թաթարական պետության (*Tartar State of Azerbaijan*)»<sup>27</sup> գոյությունը՝ զեկույցում առաջարկվել է հնարավորինս կրճատել Հայաստանի արևելք-արևմուտք ձգվածությունը, որպեսզի ոյուրին լինի մի սահմանից մյուսը զորքի արագ տեղափոխումը:

- Ելքը դեպի ծով. զեկույցի հեղինակները Հայաստանի գոյության համար անհրաժեշտ են համարել դեպի ծով ելք ունենալը և գտել են, որ զեկույցում եղած առաջարկները կլուծեն այդ հարցը<sup>28</sup>:

Ձեկույցի երկրորդ մասում արվել են մի շարք առաջարկներ, այդ թվում.

- Հաշվի առնելով զեկույցի վերոհիշյալ 1-ին և 2-րդ գործոնները՝ Երզնկան և Տրապիզոնը չընդգրկել Հայաստանի կազմի մեջ: Այսուհանդերձ, առաջարկվել է ապառազմականացնել այդ տարածքը: Միևնույն ժամանակ նախատեսվել է Հայաստանին ազատ գործածության տալ Երզրում-Տրապիզոն և Բայբուրդ-Տրապիզոն ճանապարհները և որոշակի արտոնություններ Տրապիզոնի նավահանգստում<sup>29</sup>:

- Ստեղծվելիք Բաթումի ազատ պետության (*Free State of Batum*) և Հայաստանի Հանրապետության սահմանի հստակեցումը թողնել տեղում միջդաշնակցային հանձնախմբի որոշմանը: Միևնույն ժամանակ

<sup>22</sup> Տե՛ս **R. Hovhannisian**, նշվ. աշխ., էջ 29:

<sup>23</sup> Տե՛ս **Zaven Der Yeghiayan**, *My Patriarchal Memories*, Barrington, 2002, էջ 205:

<sup>24</sup> Տե՛ս **Av. Aharonian**, նշվ. աշխ., էջ 62:

<sup>25</sup> **W. Wilson**, *Arbitral Award*, pp. 99-100.

<sup>26</sup> *Ibid*, p. 100.

<sup>27</sup> *Ibid*.

<sup>28</sup> Տե՛ս *Ibid*, էջ 99-100:

<sup>29</sup> Տե՛ս *Ibid*, էջ 104:

Բաթուն պետությունը ստեղծել հնարավորինս փոքր, իսկ Կարս-Արդահան-Բաթուն ճանապարհը տալ Հայաստանին:

- Վրաստանի ու Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանների հարցում սպասել, որպեսզի շահագրգիռ կողմերն իրենք գան փոխընդունելի տարբերակի: Այն դեպքում, եթե կողմերը չեն հանգի որևէ համաձայնության, հարցը փոխանցել Ազգերի լիգայի իրավարարությանը (arbitration), որը կստեղծի միջդաշնակցային հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ «հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները» (*taking into account, in principle, ethnographical data*)<sup>30</sup>:

Նկատի ունենալով վերը բերված գործոններն ու առաջարկները՝ զեկույցն առաջարկել է Հայաստանի հետևյալ սահմանները.

- Բաթուն ազատ պետության հետ սահմանը պիտի անցնի ճորոխ գետի հովտով, որտեղով էլ պիտի անցնի կառուցվելիք Կարս-Բաթուն երկաթգիծը: Բաթունը պիտի լինի ազատ նավահանգիստ ողջ Անդրկովկասի, այդ թվում՝ Հայաստանի համար: Առաջարկվում էր նաև Բաթունից արևմուտք ստեղծել ինքնավար Լազիստան պետություն Հայաստանի անվանական գերիշխանության ներքո (autonomous State of Lazistan under the nominal suzerainty of Armenia)<sup>31</sup>:

- Վրաստանի հետ սահմանն այնպես պիտի գծվի, որ Արդահանի և Արդվինի վրայով անցնող Կարս-Բաթուն ճանապարհը ամբողջովին լինի Հայաստանի տարածքում, ընդսմին՝ այն հյուսիսում պիտի ունենա բավարար պաշտպանական գոտի<sup>32</sup>:

Հայաստանի մյուս սահմանները հանգամանալից նկարագրված էին զեկույցին կից հավելվածի մեջ, ինչպես նաև հստակորեն գծված առդիր քարտեզում (տե՛ս Իրավարար վճռի №1 քարտեզը)<sup>33</sup>: Արևմտյան սահմանագիծը սկսում էր Սև ծովի ափամերձից, ապա Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթների վարչական սահմանի երկայնքով հարավ, անցնում էր Մուշից 20 կմ արևմուտք՝ Հայաստանին թողնելով Մուշն ու Բինգյուլը: Հարավային սահմանը սկսում էր Մուշից հարավ, անցնում էր Վանա լճի հարավով դեպի Պարսկաստանի սահմանը՝ Կոտուր (Kotur) քաղաքը:

Ինչպես նշվեց վերը, հանձնախումբը Հայաստանի և Վրաստանի ու Ադրբեջանի սահմանները որոշելու համար որպես հիմք էր առաջարկել «ազգագրական տվյալները»: Ըստ այդմ՝ հանձնախումբը, հաշվի առնելով 1920 թ. Հարավային Կովկասում տիրող ազգագրական վիճակը, Հայաստանի Հանրապետության տարածք էր համարում ոչ միայն Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ, այլև Գարդմանքի զգալի մասը, ինչպես նաև Ջավախքը, ինչն իր համապատասխան արտացոլումն էր գտել նաև զեկույցին կից քարտեզում (տե՛ս Իրավարար վճռի վերոհիշյալ №1 քարտեզը): Ջեկույցի մեջ քննության են առնվել նաև հարակից այլ հարցեր:

---

<sup>30</sup> *Ibid*, p. 102.

<sup>31</sup> Տե՛ս *Ibid*, էջ 103:

<sup>32</sup> Տե՛ս *Ibid*:

<sup>33</sup> Տե՛ս *Ibid*, էջ 328:

Ամփոփելով Հայաստանի վերաբերյալ Լոնդոնի համաժողովի առաջին զեկույցը՝ կարելի է նշել, որ այն ուներ հետևյալ կետերը.

- Չընդգրկել Տրապիզոնը և Երզնկան Հայաստանի կազմում,
- Հայաստանի և Բաթունի սահմանը որոշել միջդաշնակցային հանձնախմբի կողմից,
- Հետաձգել Վրաստանի ու Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանների քննարկումը,
- Ստեղծել Լազիստանի ինքնավար պետություն Հայաստանի անվանական գերիշխանության ներքո,
- Ապառազմականացնել Տրապիզոնի ներքին գավառները,
- Հրավեր հղել Ազգերի լիգային, որպեսզի վերջինս նպաստի Հայաստանի ազգային բանակի ստեղծմանը,
- Պարտավորեցնել Ֆրանսիային՝ պաշտպանել հայերին Կիլիկիայում<sup>34</sup>:

Սույն զեկույցի քննարկումից հետո գրեթե երկու շաբաթ Հայկական հարցը չի շոշափվել Լոնդոնի համաժողովում: Լորդ Քերզոնը միայն 1920 թ. մարտի 12-ին է նորից անդրադարձել Հայաստանի սահմաններին և կարգավիճակի հարցին: Նշելով, որ արդեն կա նախնական համաձայնություն Հայաստանի սահմանների վերաբերյալ, ներկաների ուշադրությունը հրավիրել է Հայաստանի ապագա գոյության նախադրյալների վրա: Նա նշել է, որ Հայաստանն իր գոյատևման համար կարիք ունի զենքի և դրամական աջակցության: Քանի որ դեռ ոչ մի երկիր հանդես չի եկել Հայաստանի խնամատարությունը ստանձնելու հանձնառությամբ, նա առաջարկել է Հայաստանը դնել Ազգերի լիգայի պաշտպանության կամ երաշխավորության (protection or guarantee) ներքո: Համաձայնություն է ձեռք բերվել նման խնդրանքով դիմել Ազգերի լիգայի խորհրդին (Council League of Nations)<sup>35</sup>: Նույն օրը լորդ Քերզոնը նշյալ խորհրդին ուղարկել է համապատասխան հեռագիր, որի երկրորդ պարբերությամբ մասնավորապես ասվում էր.

*«Տևական ժամանակ հույս կար, որ այս երկրի խնամատարությունը (mandate) Ազգերի լիգայի հովանու ներքո կընդունվի Ամերիկայի կամ Եվրոպական որևէ երկրի կողմից: Այսուհանդերձ, քանի որ ներկայումս չկա որևէ երկիր, որ պատրաստակամ լինի ստանձնելու նման հանձնառություն, Գերագույն խորհուրդն իր ցանկությունն է արտահայտել, որն, ըստ արված առաջարկի, նաև ներառվելու է Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի մեջ, հայկական ապագա պետությունը դնել Ազգերի լիգայի պաշտպանության ներքո»<sup>36</sup>:*

<sup>34</sup> Տե՛ս DBFP, v. VII, Charter Summaries, Charter I, էջ XVI:

<sup>35</sup> Տե՛ս DBFP, VII, Document № 58.2: Decision to invite the Council of the league of Nations to be responsible for the future protection of Armenia, էջ 478:

<sup>36</sup> *Ibid*, p. 479. Հեռագիրն ամբողջությամբ հրապարակվել է Procès-Verbal of the Third Session of the Council of the League of Nations, Geneva, 1921, p. 33.

Օրեր անց՝ մարտի 16-ին, լորդ Քերզոնը կրկին անդրադարձել է Հայկական հարցին: Նա տեղեկացրել է, որ հեռագրի հաջորդ իսկ օրը՝ մարտի 13-ին, շաբաթ, Ազգերի լիգայի խորհուրդը գումարել է փակ նիստ, որտեղ քննության են դրվել հեռագրում արժարժված հարցերը՝ Հայաստանի խնամատարության հարցը և Թուրքիայում ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցը: Ազգերի լիգայի խորհուրդը որևէ որոշում չի կայացրել՝ անբավարար իրազեկության պատճառով, և խնդրել է նոր տեղեկություններ: Համաժողովի՝ մարտի 16-ի նիստում որոշվել է մինչև Ազգերի լիգայի խորհրդի հաջորդ նիստը՝ ապրիլի 25-ը, նրան տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև խնդրել, որ հնարավորության դեպքում Հայաստանի հարցը քննարկվի ավելի վաղ<sup>37</sup>:

Ասեմք նաև, որ նույն՝ մարտի 16-ին հայկական պատվիրակությունը երրորդ անգամ է հանդիպել Հայաստանի սահմանների հարցերով զբաղվող հանձնախմբի հետ: Հայկական պատվիրակության կազմում են եղել Ավետիս Ահարոնյանը, Պողոս Նուբար փաշան, Կ.Պոլսի պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, գեներալ Ղորղանյանը<sup>38</sup>: Հանդիպման հենց սկզբում հանձնախմբի ատենապետ Ռոբերտ Վանսիթարթը պաշտոնապես տեղեկացրել է հետևյալը. «Գերագույն խորհուրդը միաձայն որոշում է ընդունել ազատ և անկախ հայկական պետության ստեղծման մասին, բայց քանի որ ոչ մի տերություն առ այսօր չի ստանձնել նրա մանդատը, առաջարկվել է՝ Ազգերի լիգան ստանձնի նորաստեղծ հայկական պետության հովանավորությունը (protectorate)»<sup>39</sup>: Հայաստանի ապագա կարգավիճակը հստակեցնելուց հետո հանձնախմբի ղեկավարը հայկական պատվիրակությանը խնդրել է 4-5 օրվա ընթացքում տեղեկանք ներկայացնել Հայաստանի զինվորական, ֆինանսական և վարչական կարիքների մասին: Պատասխանելով Հայաստանի սահմանների մասին Ահարոնյանի հարցին՝ բրիտանացի դիվանագետը նշել է. «Դուք կունենաք Հայաստանի երկու մեծ հատված՝ կովկասյան և թուրքական, ներառյալ Վանը, Բիթլիսը, Մուշը, նաև Էրզրումը, ավելի հեռու, քան Էրզրումը, բայց ոչ այնքան հեռու, որքան Երզնկան, ներառյալ իհարկե Մամախաթունը»<sup>40</sup>:

Հայաստանի կարգավիճակի և սահմանների հարցը վերստին Լոնդոնի համաժողովի հանգամանալից քննության առարկա է դարձել 1920 թ. մարտի 25-ին: Այս անգամ քննարկման է դրվել արդեն բազմա-հիշյալ՝ Հայաստանի ձևավորման հանձնախմբի (Commission on the Formation of a future Armenian State)<sup>41</sup> երկրորդ զեկույցը: Ըստ էության, նոր զեկույցը Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի՝ Հա-

<sup>37</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 62.3: Role of the League of Nations in the Turkish peace treaty, էջ 507-508:

<sup>38</sup> Տե՛ս Zaven Der Yeghiayan, նշվ. աշխ., էջ 206:

<sup>39</sup> Av. Aharonian, նշվ. աշխ., էջ 65:

<sup>40</sup> Ibid.

<sup>41</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 71.4: Observations on the report of the Commission on the formation of a future Armenian State, էջ 639:

յաստանին և Բաթումին վերաբերող հատվածների նախօրինակն էր: Հայաստանին վերաբերող հատվածը բաղկացած էր նախաբանից և 9 հոդվածից, իսկ Բաթումին վերաբերողը՝ 5 հոդվածից:

Հայաստանին վերաբերող հատվածի առաջին հոդվածով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը որպես ազատ և անկախ երկիր (as free and independent state):

Երկրորդ հոդվածը բավականին հանգամանալից նկարագրում էր Հայաստանի և հարևան երկրների սահմանը, այդ թվում՝ 2.1 հոդվածը Թուրքիայի և Քրդստանի հետ, 2.2-ը՝ Պարսկաստանի, 2.3-ը՝ Ադրբեջանի, 2.4-ը՝ Վրաստանի, 2.5-ը՝ Բաթումի, 2.6-ը՝ Սև ծովի:

Երրորդ հոդվածը հստակեցնում էր Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի և Քրդստանի սահմանները տեղանշող հանձնախմբերի կազմը:

Չորրորդ հոդվածը վերաբերում էր Հայաստանի և Վրաստանի, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի սահմաններին: Նշվում էր, որ նախ շահագրգիռ երկրները պիտի ուղղակի համաձայնությամբ որոշեն իրենց սահմանը: Եթե կողմերը դրան չեն հասնում Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, ապա սահմանները պիտի որոշեն Մեծ տերությունները, որոնք էլ տեղեկություն պիտի իրականացնեն սահմանանշումը: Թեև սույն հոդվածը չի հստակեցնում այն սկզբունքները, որոնցով սահմանները որոշելիս առաջնորդվելու էին Մեծ տերությունները, այսուհանդերձ ակնհայտ է, որ այդ սկզբունքը լինելու էր նախորդ զեկուլյցի մեջ (24 փետրվարի, 1920 թ.) ամրագրված «ազգագրական տվյալները» (ethnographical data)<sup>42</sup>:

Հինգերորդ հոդվածը սահմանանշում էր Հայաստանին սահմանակից Թուրքիայի այն տարածքը, որը ենթակա էր ապառազմականացման:

Վեցերորդ հոդվածը նկարագրում էր Լազիստանի սահմանները, որը պիտի տեղական ինքնավարություն (local autonomy) ունենար Հայաստանի կազմում:

Յոթերորդ հոդվածը ամրագրում էր Հայաստանի պարտավորությունները փոքրամասնությունների շահերը երաշխավորելու ուղղությամբ:

Ութերորդ հոդվածը հստակեցնում էր Թուրքիայի արտաքին պարտքում Հայաստանի այն ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանալու էին նախկին Թուրքիայի որոշակի տարածքը ստանալուց:

Իններորդ հոդվածը նախատեսում էր հետագայում առաջացած հարցերի քննարկումը նոր համաձայնագրերով<sup>43</sup>:

Տևական քննարկումից հետո էական փոփոխություններ են մտցվել ներկայացված նախագծի մեջ: Կատարված ամենակարևոր փոփոխությունները վերաբերել են Լազիստանին և Բաթումի ազատ պետության

<sup>42</sup> Տե՛ս **W. Wilson**, *Arbitral Award*, էջ 102:

<sup>43</sup> Տե՛ս DBFP, v. VII, Appendix I to Document № 71: Report of a Future Armenian State, էջ 642-649:

նը: Որոշվել է չստեղծել Բաթունի ազատ պետություն (Free State of Batum), այլ միայն ազատ նավահանգիստ (free port): Բաթունը տալ Վրաստանին, իսկ ճորոխի և Էմիր-խերի (Emir-Kheri) հովիտները՝ Չայաստանին: Ըստ համաժողովի՝ դա մեծ զիջում էր Վրաստանին՝ այն հույսով, որ վերջինս դրա համար «բարեկամական պայմանավորվածության» (amicable arrangement) կգար Չայաստանի հետ: Նաև որոշվում է չստեղծել Լազիստանի ինքնավարություն, այլ այդ տարածքները ուղղակիորեն տալ Չայաստանին<sup>44</sup>:

Ինչո՞վ էին պայմանավորված այս սկզբունքային փոփոխությունները: Ամենայն հավանականությամբ դա կարելի է բացատրել նախորդ օրը Միացյալ Նահանգների արտահայտած պաշտոնական դիրքորոշմամբ: Թեև ամերիկացիները պաշտոնապես ներկայացված չէին Լոնդոնի համաժողովում, այսուհանդերձ բավականին իրազեկ էին քննարկումներին և իրենց իրավասու էին համարում պարբերաբար կարծիք արտահայտել քննարկվող հարցերի շուրջ: 1920 թ. մարտի 24-ին ԱՄՆ նորանշանակ<sup>45</sup> պետքարտուղար Բեյնբրիջ Բոլբրին (Bainbridge Colby), ի պատասխան Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպանի՝ 12 մարտի 1920 թ. գրության, նրա միջոցով նամակ էր հղել Լոնդոնի համաժողովին, որում, ի մասնավորի, առարկություններ է հայտնել ապագա Չայաստանի վարչատարածքային կառուցվածքի և սահմանների վերաբերյալ: Արտահայտելով ԱՄՆ պաշտոնական տեսակետը Չայաստանի Չանրապետության սահմանների վերաբերյալ՝ նա գրել է.

*«Նրա [Չայաստանի] սահմանները պիտի գծվեն այն ձևով, որպեսզի ճանաչվեն հայ ժողովրդի բոլոր օրինական պահանջները և, հատկապես, նրանց պիտի տրվի դյուրին և անխափան ելք դեպի ծով: Թեև տեղյակ չենք, թե ինչ նկատառումներով է առաջնորդվել Գերագույն խորհուրդն իր որոշումը կայացնելիս, այսուհանդերձ գտնում ենք, որ Լազիստանի նկատմամբ հատուկ իրավունքները դժվար թե Չայաստանին ապահովեն նրա գոյության համար անհրաժեշտ ծովային ելքը: Հուսով ենք, որ հաշվի առնելով այն փաստը, որ Տրապիզոնը մշտապես ծովակայան է եղել Չայաստանի վրայով անցնող առևտրային ճանապարհների համար, ինչպես նաև պրն. Վենիզելոսը (Venizelos) շրջանի հույների անունից արտահայտել է նրանց նախընտրությունն ավելի շուտ Չայաստանին միանալու, քան Թուրքիային, [Մեծ] տերությունները պատրաստակամ կլինեն Տրապիզոնը Չայաստանին հանձնելու»<sup>46</sup>:*

Վերոհիշյալ պաշտոնական գրավոր դիրքորոշումից դեռևս երկու շաբաթ առաջ՝ մարտի 9-ին<sup>47</sup>, Վաշինգտոնում Ֆրանսիայի դեսպան Ժյուսերանը (Jusserand) հանդիպել էր ԱՄՆ պետքարտուղարի պաշտո-

<sup>44</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 71.4: *op.cit.*, էջ 640:

<sup>45</sup> Բոլբրին ԱՄՆ պետքարտուղար էր նշանակվել մեկ օր առաջ՝ 1920 թ. մարտի 23-ին:

<sup>46</sup> W. Wilson, *Arbitral Award*, pp. 121-122.

<sup>47</sup> Տե՛ս *Ibid*, էջ 113:

նակատար Ֆրանկ Փոլքի (Frank Polk) հետ, ով հնչեցրել էր ամերիկյան տեսակետը Հայաստանի սահմանների վերաբերյալ: Իր հեռագրի մեջ Ֆրանսիայի դեսպանն այն ձևակերպել էր հետևյալ կերպ. «Նա շատ անորոշ էր այս հարցի առնչությամբ: Սակայն կարծում եմ, որ հնարավոր է, որ [ամերիկացիները] բացառեն Կիլիկիան և ներառեն Վանա լճի շրջակայքը, ինչպես նաև Տրապիզոնը և այդ նավահանգստից դեպի արևմուտք ընկած որոշ ծովեզերք»<sup>48</sup>:

Այսու, կարծում ենք, որ ամերիկյան բանավոր և գրավոր վերոշարադրյալ դիրքոշումն էր, որ Սեժ տերություններին ստիպել է լուրջ վերատեսության ենթարկել իրենց իսկ մոտեցումները, հատկապես Լազիստանի և Բաթումի հարցերում:

Սույն քննարկման հաջորդ օրն իսկ՝ մարտի 26-ին, Բաթումի հարցը կրկին խնդրո առարկա է դարձել: Հարցը քննարկվել է երկու տեսանկյունից՝ Հայաստան-Բաթում սահմանի և Բաթումի կարգավիճակի: Առաջին մասով որոշվել է չեղյալ հայտարարել նախորդ օրվա զեկուլյցի նախաբանի վերջին պարբերությունը (որով Կարս-Արդահան-Բաթում ճանապարհի Արդահան-Բաթում հատվածը տրվում էր Վրաստանին) և Հայաստանի տնօրինմանը թողնել Կարս-Արդահան-Բաթում ճանապարհն ամբողջությամբ<sup>49</sup>: Այդ օրն ավելի երկարատև քննարկումների է արժանացել Բաթումի կարգավիճակի հարցը: Ֆրանսիայի պատվիրակությունը նշել է, որ եթե Բաթումը ուղղակիորեն տրվի վրացիներին, ապա «Հայաստանին երբեք թույլ չի տրվի անգամ մի մատնաչափ տեղ ունենալ այնտեղ» (*Armenia would never be allowed to have a finger in the place at all*)<sup>50</sup>:

Ֆրանսիական պատվիրակության ղեկավար Բերթելոն միաժամանակ ընդգծել է, որ «կասկած չկա, որ վրացիները պատրաստ են ստանձնելու ցանկացած պարտավորություն, որը մենք կխնդրենք, բայց միանգամայն պարզ է, որ նրանք երբեք հավատարիմ չեն լինի դրանց»: Ըստ այդմ՝ որոշվել է դիմել Ազգերի լիգայի խորհրդին, որպեսզի վերջինս ապրիլի առաջին շաբաթվա վերջին կայանալիք նիստի ժամանակ քննարկի Բաթումում միջդաշնակցային զինված ուժեր տեղակայելու հարցը<sup>51</sup>:

Հաջորդ օրը՝ մարտի 27-ին, ևս անդրադարձ է եղել Հայաստանին: Այս անգամ հարցը վերաբերել է Հայաստանի հետ կնքվելիք փոքրամասնությունների պայմանագրին (*Minorities Treaty with Armenia*)<sup>52</sup>: Քանի որ պայմանագիրը համարվել է լիովին պատրաստ՝ կողմերն ընդունել են այն ամբողջությամբ և որոշել ապրիլի 20-ին պայմանագրի

<sup>48</sup> DBFP, v. VII, Document № 60, Appendix 4: Paraphrase of Extract from Telegram from the British representative at Washington, dated March 11, 1920, p. 501.

<sup>49</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 72.5: Preparation of peace with Turkey, էջ 656:

<sup>50</sup> *Ibid.*

<sup>51</sup> Տե՛ս *Ibid.*

<sup>52</sup> Տե՛ս DBFP, v. VII, Appendix 2 to Document № 73: Memorandum for the Foreign Ministers and Ambassadors regarding Minorities Treaty with Armenia, էջ 662-663:

մեկական օրինակ տալ նաև Հայաստանի պատվիրակությանը և թուրքերին<sup>53</sup>:

Քանի որ պատրաստ էր նաև Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը, ուստի Լոնդոնի համաժողովի՝ մարտի 29-ի նիստում որոշվում է հաջորդ համաժողովի ավարտին, որը նախատեսված էր հրավիրել Սան Ռեմոյում 1920 թ. ապրիլի 19-23-ը, հրավիրել նաև թուրքերին և նրանց հանձնել խաղաղության պայմանագրի նախօրինակը: Դրանից հետո նախատեսվում էր 2-3 շաբաթ հայտարարել ընդմիջում, ապա և Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը ստորագրել մայիսի երկրորդ կեսին<sup>54</sup>:

Այսպիսով, ամփոփելով Լոնդոնի համաժողովում Հայաստանի կարգավիճակի և սահմաններին վերաբերող հարցերի քննարկումները, կարող ենք դրանց զարգացման և նորափոփոխման (modifications) մասին անել հետևյալ եզրակացությունները.

- Համաժողովը միանշանակորեն հանդես է եկել Հայաստանը որպես անկախ երկիր տեսնելու օգտին: Ընդ որում՝ որպես պետականության «միջուկ» (nucleus) ընդունվել է Ռուսաստանի կայսրության հայաբնակ որոշ տարածքների վրա ստեղծված և արդեն իսկ de facto ճանաչված Հայաստանի Հանրապետությունը, որին պիտի միացվեին նախկին Օսմանյան կայսրության որոշ տարածքներ:

- Համաժողովը, հաշվի առնելով հայոց ջարդերից հետո ստեղծված ժողովրդագրական իրավիճակը, վերջնականապես հրաժարվել է Մեծ Հայաստանի (Սև ծովից Միջերկրական ծով) գաղափարից և որոշել է բավարարվել Փոքր Հայաստանի նախագծմամբ, որը պիտի ներառեր նախկին Ռուսական կայսրության հայաբնակ գավառները և նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգները: Հարավային Կովկասում Հայաստանի և Վրաստանի ու Ադրբեջանի միջև սահմանների որոշման համար սկզբունքորեն հիմք է ընդունվել ազգագրական պատկերը:

- Համաժողովը հրաժարվել է Հայաստանի կազմում ինքնավար Լազիստան ստեղծելու նախնական գաղափարից և որոշել է այդ տարածքներն ուղղակիորեն տալ Հայաստանին: Ազգային և կրոնական փոքրամասնությունների շահերը երաշխավորված տեսնելու համար համաժողովը որոշել է Հայաստանին պարտավորեցնել Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիր ստորագրելիս միաժամանակ ստորագրել փոքրամասնությունների [պաշտպանության] պայմանագիր:

- Համաժողովը դեպի Սև ծով Հայաստանի ազատ և անարգել ելքն ապահովելու նպատակով, որը դիտարկվել է անհրաժեշտ նախահիմք կենսունակ պետություն ստեղծելու համար, որոշել է Տրապիզոն նավահանգստում Հայաստանին տալ արտոնյալ կարգավիճակ:

<sup>53</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document №№ 73.2 & 73.3: Adoption of draft treaty regarding minorities in Armenia; &: Decision to accept draft clauses relative to judicial reform and capitulations in Turkey, էջ 660:

<sup>54</sup> Տե՛ս DBFP, v. VII, Document № 74.1: Consideration of the date of the next plenary session of the Supreme Council, էջ 665:

• Չամաժողովը, սկսելով Բաթումի ազատ պետություն ստեղծելու գաղափարից, ի վերջո որոշել է բավարարվել Բաթումի ազատ նավահանգստի կարգավիճակով, իսկ հայ-վրացական սահման համարել ճորոխ գետը: Մյուս հատվածներում որոշվել է սահմանն այնպես գծել, որ Կարս-Արդահան-Բաթում ճանապարհն անբողջությամբ լինի Չայաստանի տարածքում:

**ԱՐԱ ՓԱՅԿ** – *Вопрос статуса и границ Республики Армения на первой Лондонской конференции (12 февраля – 10 апреля 1929 г.).* – В статье рассматривается армянский аспект Лондонской конференции – первой после основной сессии Парижской мирной конференции (1919–1920). Главной задачей указанного международного форума было выработать условия мира с побеждённой Османской империей. В этой связи вопросы, связанные со статусом и границами недавно де-факто признанной Республики Армения, неоднократно и горячо обсуждались. 16 февраля для доклада о границах вновь созданного государства была сформирована специальная комиссия. Первый свой документ – "Доклад и предложения комиссии по делимитации границ Армении" – она подготовила к обсуждению 27 февраля. 25 марта, после того как государственный секретарь США представил к нему ряд предложений, доклад пересмотрели и внесли в него некоторые изменения.

**ԱՐԱ ՓԱՅԿ** – *The Issue of the Status of the Republic of Armenia and the First Conference in London (February 10 – April 12, 1920).* – The article deals with the Armenian dimension of the First Conference of London (Feb. 10 – Apr. 12, 1920), which was the first allied conference held after the conclusion of the main session of the Paris Peace Conference (1919-1920). The main work of the mentioned conference was the preparation of terms of peace with the broken Ottoman Empire. In this framework the status of Armenia and the issues regarding the borders of the newly *de facto* recognized Armenian Republic (Armenian access to sea, the status of Lazistan, the status and borders of the Free State/Port of Batumi, the borders with Georgia and Azerbaijan, US support and possible participation, etc.) were among the hot topics of the discussions repeatedly. A special commission was created to report on the boundaries of Armenia on February 16, 1920. The first document by this commission, entitled "Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia" was submitted for the deliberations on February 27, 1920. The report was revisited and modified by the Conference on March 25, 1920, after receiving some proposals from the US Secretary of State.